ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ.
Սարչապետ, Հեռ. (077)867459 ,
sarchapet.lori@mta.gov.am

N 221-19
26 ապրիլ 2019թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 25-ի թիվ 107-108-Ա որոշումները և աշխատակազմի քարտուղարի 2019 թվականի ապրիլի 25-ի <<Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ Կ.Կագրամանովային արձակուրդ տրամադրելու մասին>> թիվ 18 հրամանը :

Առդիր՝3 էջ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կատ. '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 107

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Անուշ Նիկոլի Բարսեղյանի դիմումը հողամասից հրաժարվելու վերաբերյալ, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 1530776 վկայականը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Անուշ Նիկոլի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 06-100-125-352 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, 0.32 հա մակերեսով, գյուղատնտեսական նշանակության /խոտհարք/ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15 օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանում:

3. Աշխատակազմի քարտուղարին ՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

5. Ուժը կորցրած ճանաչել Սարչապետ համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 15-ի <<Սարչապետ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին>> թիվ 104-Ա որոշումը:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2019թ. ապրիլ 25
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 108

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-067-0014-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն և 731-Ն որոշումների դրույթները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը, և հաշվի առնելով այն, որ ինքնակամ կառուցված շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի առաջացնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառույցը համապատասխանում է քաղաքաշինական նորմերի և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտի պահանջ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սարչապետ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-067-0014-0004 ծածկագրի 0.04358 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա Էդիկ Հովիկի Փնջոյանի կողմից (ծնված՝10.04.1971թ., անձնագիր՝ AK0685875) ինքնակամ կառուցված 62.54քմ մակերեսով խաղասրահը և 3.55քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական, որպես Սարչապետ համայնքի սեփականություն:

2. Հողամասի գործառնական նշանակությունը՝ որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման:

3.Առաջարկություն անել կառույցը իրականացրած անձ՝ Էդիկ Փնջոյանին, ուղղակի վաճառքի եղանակով կառույցը գնել ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 35-րդ կետի բ) ենթակետով սահմանված դրույքաչափով (հասարակական նշանակության կառույցների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 90-ապատիկի չափով):

4.Շինությանը տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, գ. Ձորամուտ, փողոց 1, թիվ 12:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2019թ. ապրիլ 25
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Սարչապետ, (077)867459, sarchapet.lori@mta.gov.am

Հ Ր Ա Մ Ա Ն

25 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 18

ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2-ՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ Կ.ԿԱԳՐԱՄԱՆՈՎԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 161-րդ հոդվածների, ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի <<գ>> կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշմամբ, հաշվի առնելով Կարինա Կագրամանովայի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ Կարինա Կագրամանովային տրամադրել 2019թ. աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները ս/թ մայիսի 2-ից մինչև ս/թ հունիսի 6-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր:

2. Ներկայանալ աշխատանքի ս/թ հունիսի 7-ից:

3. Սույն հրամանն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Աշխատակազմի քարտուղար՝ **ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2019 թ. ապրիլ 25
գ.Սարչապետ